# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 28.11.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ՍՑ-ԷՍ-2017/56**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.10.2017թ. թիվ 03/26-3/18271-17 գրությամբ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02627826/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ոստիկանության 03.10.2017թ. թիվ 11/2194 գրության հիման վրա, 09.10.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. **<u>ՀՀ ոստիկանության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ոստիկանությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.10.2017թ. թիվ 11/2194 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ ներկայացնելով «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ ներկայացրած «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն վերջինիս կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

**3. <u>«Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Խորհուրդը դիմել է «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2017թ. թիվ 03/26-3/18271-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչներ Արտակ Ղազարյանը և Սամվել Խուդավերդյանը:

**4. <u>ՍՑ-ԷՍ-2017/56 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.</u>**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2017թ. թիվ 03/26-3/18271-17 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ոստիկանության (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.10.2017թ. թիվ 11/2194 գրությունը, «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը, «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 04.07.2017թ. նիստի թիվ 2, 17.07.2017թ.

նիստի թիվ 3, 27.07.2017թ. նիստի թիվ 4, 01.08.2017թ. նիստի թիվ 5 և 04.08.2017թ. նիստի թիվ 6 արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին (այսուհետ՝ նաև Կոմիտե) 18.07.2017թ. կատարված հարցումը և Կոմիտեի կողմից 21.07.2017թ. ներկայացված եզրակացությունը, Կոմիտեի աշխատակազմի ՀՎՍՎ թիվ 3 բաժնի կողմից 22.09.2017թ. Ընկերությանը տրամադրած տեղեկանքը, Կոմիտեի կողմից 21.11.2017թ. թիվ 1/6-1/48377-17 գրությամբ Խորհրդին տրամադրված տեղեկատվությունը, Պատվիրատուի կարծիքը և դիրքորոշումը.

ՀՀ ոստիկանության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ նաև՝ ընթացակարգ) ի թիվս այլ մասնակիցների հայտ է ներկայացրել նաև «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովի 04.07.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 3-րդ կետով որոշել է ընթացակարգի 2, 5, 16-20, 29, 31, 33, 36, 41,43, 44, 47, 48, 50, 54-56, 58, 69, 70, 75-77, 80-րդ չափաբաժինների մասով «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել որպես առաջին տեղն զբաղեցրած մասնակից:

17.07.2017թ. նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով Հանձնաժողովը որոշել է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին ներկայացնել հարցում՝ ընթացակարգի առաջին տեղն զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Հանձնաժողովը 18.07.2017թ. Կոմիտեին ուղարկել է հարցում՝ խնդրելով տարամադրել «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի՝ 03.07.2017թ. դրությամբ ՀՀ կառավարության

2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների վերաբերյալ տեղեկատվություն:

Կոմիտեի կողմից 21.07.2017թ., տրամադրված եզրակացության համաձայն՝ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 11,000 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

«ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առավելագույն գնային առաջարկը կազմել է 75,000 ՀՀ դրամ (19-րդ չափաբաժնի համար):

27.07.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է 2, 4, 5, 16-20, 27, 29, 31, 33, 36, 41, 43, 44, 47, 48, 50, 54-56, 58, 69, 70, 75-77, 80-րդ չափաբաժինների մասով «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

04.08.2017թ. նիստի թիվ 6 արձանագրությամբ Հանձնաժողովը որոշել է «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի հետ կնքել տնտեսական և կենցաղային ապրանքների մատակարարման պայմանագիր:

Սակայն, Պատվիրատուն 19.09.2017թ. գրությամբ դիմել է «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին՝ հայտնելով, որ հիմք ընդունելով ՀՀ ոստիկանության և «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի միջև 23.08.2017թ. կնքված թիվ ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ/1 ծածկագրով պայմանագրի 8.1 կետը և ՀՀ ֆինանսների նախարարության 06.08.2017թ. թիվ 03/26-1/16183-17 գրությունը՝ ՀՀ ոստիկանությունը միակողմանի լուծում է վերը նշված պայմանագիրը՝ վերջինիս կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ ունենալու հիմնավորմամբ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին,

- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:
- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման

խրոհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում նույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը:

ՀՀ ոստիկանության կարիքների համար «ՀՀ ԿԱ Ո-ԳՀԱՊՁԲ-2017-ՏԿ-ՃՈ/ԱՎՎ/ՊՊԳՎ» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին մասի՝

- 8.13 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.
- 8.15 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 8.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած

մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Ընկերությունը Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ՀՎՍՎ թիվ 3 բաժնի կողմից Ընկերությանը 22.08.2017թ. թիվ 688 գրությամբ տրամադրած հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների մասով պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքը, համաձայն որի 03.07.2017թ. դրությամբ Ընկերությանը վերագրվել է նյութական խրախուսման և համակարգի զարգացման ֆոնդին կատարված վճարների մասով 11,000 ՀՀ դրամի չափով տուգանք:

Խորհրդի կողմից N ՍՑ-ԷՍ-2017/56 ծածկագրով պաշտոնական ընթացակարգի քննության շրջանակներում հարցում է ներկայացվել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե՝ խնդրելով տրամադրել տեղեկատվություն, արդյո՞ք նշված տուգանքը հանդիսանում է տվյալ օրվա դրությամբ Ընկերության կողմից ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցած ժամկետանց հարկային պարտավորություն, թե՝ ոչ:

Ի պատասխան Խորհրդի հարցմանը ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 21.11.2017թ. թիվ 1/6-1/48377 գրությամբ Խորհրդին հայտնել է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ի 03.07.2017թ. դրությամբ պետական բյուջեի նկատմամբ արտացոլված 11.000 դրամ պարտավորությունը առաջացել է 21.06.2017թ. N1433199 ստուգման ակտից, որի վճարումը կատարվել է 18.07.2017թ.:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտը ներկայացնելու օրվա՝ 03.07.2017թ. դրությամբ ունեցել է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով՝ Ընկերության կողմից

ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 2-րդ հոդվածի 23-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացը գնում կատարելու նպատակով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերի, իրավունքների և պարտականությունների իրագործմանն ուղղված գործողությունների ամբողջությունն է, ներառյալ գնումների պլանավորումը, գնման առարկայի բնութագրերի հաստատումը, պայմանագրի կատարումը և կառավարումը:

Օրենքի 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը պաշտոնական ընթացակարգ է նախաձեռնում գնումների բողոքարկման խորհրդում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների բողոքարկման խորհուրդը որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Նկատի ունենալով, որ «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է հայտարարություն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից

վերահսկվող եկամուտների գծով Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ չունենալու մասին, սակայն Կոմիտեի կողմից ներկայացված եզրակացության համաձայն արձանագրվել է ժամկետանց պարտավորությունների առկայությունը, Խորհուրդը գտնում է, որ Ընկերությունը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով, 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

## Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.10.2017թ. «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 02627826/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը բավարարել:

2. «Էլիպս Գրուպ» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման**
**խորհրդի անդամ՝** **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**